

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բողոն 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սկզբունքը անխախտ պէտք է մնայ.—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Վաղար-
շապատից. Նամակ Բագուից. Նամակ Խմբա-
գրութեան. Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ ցու-
ցահանդէսից.

ՍԱԶԲՈՒՆԻՐԸ ԱՆԻՍՈՒՑ ՊԵՏԻ Է ՄՆԱՑ

„Մշակի“ երէկվայ համարի մէջ տպագրու-
ման հարցազարկի նամակից մեր ընթերցող-
ները տեղեկացան, որ Վեհափառ Վաթիկ-
անի ինքնապետ Պիոս Երկուստուրդը իր
հոգաբարձական ընտրութիւնները Ներսիսեան,
Նուշու եւ Նրե-
ւանի թեմական դպրոցների համար: Մենք
հաստատ աղբիւրից տեղեկութիւն ունենք,
որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձութեան
նախագահը, Թիֆլիսի թեմի առաջնորդը,
ստացել է հոգաբարձական ընտրութիւն
նշանակելու համար յատուկ կոնգրէս:

Այդպիսով ցրվում են այն յուզիչ կաս-
կածները, որ գոյութիւն ունէին Ներսի-
սեան դպրոցի հոգաբարձութեան ապագայ
կազմակերպութեան մասին, այդպիսով վե-
րականգնում է միւս դպրոցների հոգա-
բարձական մարմին կազմութեան հա-
մար սահմանված ժողովրդական-ընտրողա-
կան կարգը եւ ոչնչացվում են նշանակովի
հոգաբարձուները: Ինչպէս յայտնի է, Ներ-
սիսեան դպրոցի հոգաբարձութիւնը իր գոր-
ծակարգութեան ժամանակամիջոցը լրացրել
է զեռ երկու տարի սրանից առաջ եւ մի
քանի անգամ պաշտօնապէս դիմել է Վե-
հափառ Վաթիկին Նոր հոգաբարձա-
կան ընտրութիւններ նշանակելու: Ընտ-
րութիւնների յետաձգելու պատճառով
սկսեցին հասարակութեան մէջ լուրեր
պտտել, որ այլ եւ ընտրութիւններ չեն
լինելու, որ հոգաբարձուները այսուհետեւ
պէտք է լինեն նշանակովի: Այդ լուրերը
անհիմն եւ անհաւատարմ չէին թուում, ո-
րովհետեւ միւս թեմական դպրոցների հա-
մար տեղի էին ունեցել նշանակովի հոգա-
բարձութիւն կազմելու դէպքեր:

Շատ միջոցառումներ է, որ հոգեւոր իշ-
խանութիւնը զանազան փորձերից յետոյ
եկաւ այն արդար եղբայրացութեան, որ
նշանակովի հոգաբարձութեան միջոցով չէ

կարելի աջող կերպով կառավարել մեր
թեմական դպրոցները եւ որ անգործնական
ու ծանր է վերցնել իր վրա մի այնպիսի
մեծ պատասխանատուութիւն, ինչպէս է
ժողովրդին փոխարինելու յաւակնութիւնը:
Նշանակովի հոգաբարձուներով հոգեւոր իշ-
խանութիւնը երբեք չէ կարող գոհացնել
ժողովրդին, որովհետեւ վերջինս միշտ այն
կարծիքին կը մնայ, որ ինքը աւելի լաւ
ընտրութիւն կանէր եւ որ նշանակովի հո-
գաբարձուները խանգարում են գործերի
աւելի աջող ընթացքը:

Այդ լաւ է: Ընտրողական սկզբունքի
անխախտ հրատարակելը մի վերին աստի-
ճանի սփոփիչ եւ քաջալերող երևոյթ է,
որ գեղեցիկ տպաւորութիւն կը թողնէ
ամենուրեք, կը հանդարտեցնէ յուզված
մտքերը եւ վերջ կը դնէ զանազան տարա-
կուսանքների: Սակայն մեզ համար ան-
հասկանալի է եւ օտարոտի մի փոփոխու-
թիւն, որ պէտք է ներմուծվի դպրոցա-
կան հոգաբարձութիւնների կազմութեան
մէջ: Ներսիսեան դպրոցի հոգաբարձական
կազմի մէջ, բացի աշխարհական հոգաբար-
ձուներից, բացի առաջնորդից, պէտք է
մտնեն եւ երկու քահանայներ: Աշխարհա-
կան հոգաբարձուների թիւը պէտք է լի-
նի վեց, քահանայների թիւը երկու:

Հարց է. միջոց է ինքը առաջնորդը,
լինելով ամբողջ թեմի հոգեւորականու-
թեան գլխավորը եւ էջմիածնի ներկայա-
ցուցիչը, ունենալով յատուկ իրաւունք
նշանակելու կրօնական առարկաների ու-
սուցիչներին, եւ մի եւ նոյն ժամանակ լինելով
հոգաբարձութեան նախագահ, պէտք ու-
նէր քահանայների մասնակցութեան այն-
պիսի հարցերում, որտեղ ինքը առանց
այն էլ հեղինակութիւն է վայելում: Իսկ
կրօնական հարցերից դուրս, անտեսական
կամ ընդհանուր վարչական հարցերում
լինի պէտք է տան քահանայները: Ի հար-
կէ, ոչնչի աւելի, քան աշխարհական հո-
գաբարձուները: Հոգաբարձութեան կազմի
մէջ եղած քահանայները դեր չունեն կա-
տարելու եւ պէտք է զգան իրանց աւե-
լորդ, անմիջապէս չը կապված ժողովրդի
հետ եւ յաճախ պէտք է հանդիսանան
ծանրութիւն նոյն իսկ նախագահի հա-
մար: Մենք հաւատարմութեամբ ենք, որ փորձը
եւ ժամանակը կապացուցանեն այդ նոր-
մուծութեան ապարդիւն լինելը:

Ընտրութիւնները պէտք է կատարվեն
նախկին եղանակով, ընտրելով պատգամա-
ւորներ, որոնց ժողովը իր կողմից կընտրէ
հոգաբարձուներին: Այդտեղ անխախտ
պահպանված է ընդունված ձևը եւ փոփո-
խութիւնները կարող են լինել միայն գոր-
ծակարգութեան եղանակների մասին: Մենք
առիթմ ենք ունեցել անցեալներում խօսել
ընտրողական գործի մէջ ցանկալի այն բա-
րեփոխութիւնների մասին, որոնցով ապա-
հովվում են ընտրութեան ճշգրտութիւնը եւ
աջողութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Սկսած այն օրից, երբ մեր մէջ էլ պարբե-
րական մամուլը հրապարակ բերեց հասարա-
կական չարիքների դէմ կուելու անհրաժեշտու-
թիւնը, հարստահարված դասակարգերի թոււմ
երեւան եկան եւ առեւտրական գործակաւտար-
ները, այդ համետ, մոռացված աշխատաւոր-
ները, որոնք թէ Մասիսեանի տիպ կրող եւ
թէ ամենավերջին տարադի ցլիկներու վա-
ճառականների մօտ մի կտոր հաց են աշխա-
տում ստրկական համբերատարութեամբ: «Մը-
շակի» երէկվայ համարում մի գտնուեալ կար-
տպված Ասիականից, թէ մասնաւորապէս
հարկադրում են գործակաւտարներին դժոխային
տօթի մէջ աշխատել անդադար, առանց հան-
գիստ առնելու, օրեկան 19 ժամ 19 ժամ...
Սա հրէշաւոր փաստ է, եւ հազիւ թէ ստրուկ-
ների որ եւ է դասակարգ այս դրութեան մէջ
լինի: Բացի դրանից, կայ այն հանգամանքը,
որ գործակաւտարների մեծ մասը աշխատութիւն
չունի նոյն իսկ կիրակի օրերը, երկուր ժամա-
նակից ի վեր գտնուեալում են, բողոքում են
այդ դրութեան դէմ, աշխատում են ամառից-
նակ մեր վաճառականներին: Բայց ինչ է ար-
ված մինչեւ այժմ: Մի քանի քաղաքների վար-
չութիւնները պարտադիր կանօններ են հրա-
տարակել կիրակի օրերը առեւտուր չանելու
մասին, բայց այդ կանօնները վաճառականու-
թեան մի քանի ճիւղերին են վերաբերվում,
մինչդեռ յայտնի է, որ, օրինակ, նաւարարական
ները եւ գինեւորները բաց են լինում եւ կիրա-
կի օրերը: Շատ տեղերում քաղաքային ինք-
նավարութիւնները, բաղկացած լինելով մեծ
մասամբ վաճառական ձայնաւորներից, նոյն իսկ
այդ մասնաւոր սահմանափակումն էլ չեն ա-

նում: Այսպէս, Օդեսայի դուռնայ այս տարի
մերժեց գործակաւտարների կիրակիօրեայ հան-
դաւորութեան մասին կազմած զեկուցումը եւ
գտնվեցան մարդիկ, որոնք սկսեցին նոյն իսկ
ապացուցանել թէ այդ տեսակ հարցերը քա-
ղաքային ինքնավարութիւնների իրաւասու-
թիւնից դուրս են: Եւ այսպէս, վաճառական-
ներից չէ կարելի սպասել դրութեան փոփո-
խութիւն: Ի՞նչ է միւսը անել. «Руч. Бѣд.»
լրագիրը առաջարկում է, որ կառավարութիւնը
ինքը ձեռք առնէ այդ հարցը եւ վճռէ օրէնսդ-
րական կարգով: Արեւմտեան Եւրոպայում այդ
ուղղութեամբ արդէն շատ քան է արված:
Հետաքրքրական է, որ Անգլիայում գոյութիւն
ունի մի ընկերութիւն, որ համոզում է խա-
նութեամբերին ժամանակից վաղ փակել մա-
ղաղները: Նա կոչվում է ամառաղները վաղ
փակելու ընկերութիւն: Մասնաւոր մեծ հնդ-
դութիւն կայ անչափահաս գործակաւտարների
դրութեան վրա:

Մենք տեսնում ենք—ասում է լրագիրը—
որ օտար պետութիւնների մէջ իւրաքանչի-
ւոր տարի աւելի եւ աւելի մեծ չափեր է
ընդունում այն շարժումը, որի նպատակն է
սահմանափակել առեւտրական ծառայողների
աշխատանքի երկարատեւութիւնը: Կիրակի-
նօրեայ եւ տօն օրերի աշխատանքը սահմա-
նափակելու հարցը վաղուց արդէն վճռված
է այնտեղ եւ արդէն մի մասնաւոր բան է
համարվում, այնքան լայն կերպով օրէնս-
դրութիւնը պաշտպանում է առեւտրական
աշխատանքը: Այդպիսի վերաբերմունքը դե-
պի առեւտրական աշխատանքը լրացնէ ար-
ժանի է, որ մենք էլ ընդօրինակենք: Մեր
առեւտրական հիմնարկութիւնները մէջ ծա-
ռայող գործակաւտարները այնքան ծանրա-
բեռնված են աշխատանքով եւ ոչ մի օրէնս-
դրական սահմանափակման ենթակա չեն, որ
այդ դրութիւնը ժամանակակից առեւտրա-
կան կեանքի ամենահիւսնալից կողմնից մէկն
է: Եթէ առանձին ձեռնարկողները դեռ այն-
քան չեն հասունացել, որ հասկանան նոր-
մալ աշխատանքի եւ հանգստութեան հասա-
րակական նշանակութիւնը, այդ դէպքում
պետութեան պարտականութիւնն է միջա-
ման այդ գործին իր օրէնսդրական իշխա-
նութեամբ: Կանօնաւոր հանգստութիւնը կը
տայ միակ հարաւորութիւն առեւտրական
ծառայողներին լրացնել իրանց կրթութեան
պակասը եւ բաւարարութիւն տալ լուսա-
ւորվելու այն մեծ պահանջին, որ ամեն
ուժեղ կերպով արտայայտվում է այս վեր-
ջին տարիները: Այս տեսակետից կիրակի-
նօրեայ հանգստութիւնը արդէն առանձին առ-
հասներին մասնաւոր գործը չէ դառնում, այլ
մի լուրջ հասարակական երևոյթ: Փիղի-
քապէս եւ մտաւորապէս զարգացած առեւ-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԾՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՑ

Պարիզ, յունիսի 12-ին

Եթէ անարգարութիւնը դայրոյթ է յարուցա-
նում եւ անձն է խուճ յուզված կրքերից,
միւս կողմից մեծ դժբաղդութիւնը, իբրեւ հե-
տեւանք նոյն անարգարութեան, խորին պատ-
կառնքի մի տուրքի անփոխելի իրաւունքն
ունի, իրաւունք, որ նուիրական է եւ յաւիտե-
ական: Այդ սրբազան տուրքը հատուցանել
կարծեցի այսօր, երբ բոլոր միւս աւելի նշա-
նաւոր, աւելի մեծ ազգերի պալիլիօնները թո-
ղած համարեա մի կրօնական երկիւղածութե-
ան մէջ զգալի Տրանսվալի բաժինը դիմելիս
Ներս Ժանեկի մարդուն թոււմ է, թէ ոտը
վաւր է մի ժողովրդի հերոսական արիւնով, ուր
մի բուռն մարդիկ մոռացված, անարգված ա-
ռաքիւնութեան դաս են տալիս ժամանակակից
մանրացած ժողովրդին, որ բարոյական վան-
սկզբունքների, ազատութեան, արդարութեան,
հանրաւորութեան նուիրական կուլտը վերածել
է անմիւս, անբովանդակ բառերի, անօգուտ բար-
բախնանքների եւ փարիսեցիական պատճառա-
բանութեամբ անաւտօթաբար քօղարկել է աշ-

խատում իր զաւորելի շահանդերութիւնը, իր
բարոյական աշխատակութիւնը:

Տրանսվալի պալիլիօնը թէեւ վաղուց պատ-
րաստ, բայց երկու օր է միայն, որ բացված
յայտարարվեց. նրա տէրերը կարծես մոռացել
էին ցուցահանդէսը: Նման այն հարսանիքաւոր-
ներին, որոնք խնձոյթի հէնց սկզբում լոււմ են,
թէ իրանց տանը հրդեհ կայ եւ ամեն բան մո-
ռացած վազում են օջաղը փրկելու մեծ դժ-
բաղդութիւնից, ճիշդ այդպէս Տրանսվալը իր
ազգային մեծ դժբաղդութեան առաջ ասես մո-
ռացել էր եւ ցուցահանդէսը եւ իր պալիլիօնը:

Բացումը տեղի ունեցաւ ընդունված սովո-
րութեան հակառակ, առանց հանդէսի, առանց
խնձոյթի, մի խորհրդաւոր լուծութեան մէջ, որ
զուրկ չէր մեծութիւնից: Թանգապին բնակիչ-
ներ չը թափվեցին այդ օրը, կարծես կարգա-
դրվեցին գրանով կամեցան հասկացնել, թէ մի
ժողովուրդ, որ իր հերոսական արիւնն է թա-
փում, այլ եւս գինի թափելու կարիք չունի:

Յիւսմանդական եւ ապանիական ճաշակով մի
փոքրիկ երկարական պալատ է Տրանսվալի
պաշտօնական պալիլիօնը, որի վրա փողփո-
ղում է փոքրիկ ազգի դրօշակը եւ իր ծաղերի
մէջ ասես թագնաւում է մի մեծ գաղտնիք, ա-
զատութեան գաղտնիքը եւ իր փոքրութեան
մէջ անգամ ունի արդարութեան եւ տանջան-
քի հպարտութիւնը: Առաջին բանը, որ աչքի է
ընկնում պալիլիօնը ներս մտնելիս, դա նա-
խադարձ Կրիսթէրի հարաւ-աֆրիկեան այդ ծեր

առիւծի մի կիսարձանն է ամբողջապէս կորած
ծաղիկների մէջ: Աչքի է ընկնում մի մեծ ծաղ-
կափունջ՝ կապույտ, սպիտակ եւ կարմիր ծա-
ղիկների Սէնի մի խումբ հայրենասէր բան-
ւորներից: Արձանի առաջ դրված է Տրանսվա-
լի սայլի մի նմուշ, նման այն սայլին, որ
կրիսթէրն ինքը բանացրել է երկաթասար-
ղութեան ժամանակ: Սայլն ունի անաղին ա-
նիւնք՝ պատած երկաթեայ հաստ օղբով եւ
վերելից կոշտ կտորէ մի ծածկով, որ կիսա-
շրջանով իջնում է սայլի կողքի վրա: յատակը
պատած է կաշուէ ցանցով՝ սայլի պատճառած
ցնցումները մեղմացնելու համար:

Այս ծանր, դանդաղաշարժ սայլը երկրագործ,
նահապետական ժողովրդի կեանքի բուռն պատ-
կերն է. բայց բօշները միմիայն հողագործ եւ
համար միշտ ամենալաւ մարտնչողներ են կղզի
եւ հէնց այդ ազատութեան սիրոյ համար չէր,
որ այս բուռն ժողովուրդը ծովերը պատնելով,
Աֆրիկայի խանձած անապատներից անցնելով
հասաւ այս հեռաւոր անկիւնը եւ մի նոր հայ-
րենիք ստեղծեց իր համար: Ազատ անկիւն,
չէն հայրենիք ունենալու համար խիստ շատ
զուրկ են տուել նրանք, որ կարողանան հեշ-
տութեամբ հրաժարվել այդ բոլորից: Երեւի
հէնց այդ ազատասիրական ոգին ցոյց տալու
համար է, որ պալիլիօնի պատերից կախված
են հին հրապաններ եւ այլ գէնքեր: Այս-
տեղ է նաեւ մի թնդանօթ, որ մի փոքրիկ,

հետաքրքիր պատմութիւն ունի: Այս թնդանօ-
թը մի բօշ դարբինի կոշտ ու կոպիտ գործն
է եւ կազմված է սայլի անիւնների երկաթեայ
հաստ օղակներից, որոնք միացած են իրար՝
հայրենասէր վարդիտի ձեւով: ամբողջ տես-
քը բիրդ է եւ անընկճելի: Այս այն թնդանօթն
է, որով բօշները կուլ են 1880 թէին իրանց
անկախութեան պատերազմի ժամանակ, որ
վերջացաւ Մալուրայի յաղթութեամբ: Թաղթող
թնդանօթ է, որ Տրանսվալի գէնքի պատիւն
է մարմնացնում իր մէջ եւ կարծես հին թըշ-
նամքների ձեւը չընկնելու համար: Եւրօպայ է
ուզարկված եւ միւս կողմից նա արիւն պտտմէ
աշխարհին մի ժողովրդի հերոսական անցումը,
նոյնքան, դուրս եւ աւելի հերոսական ներկան,
որպէս զի այդ ժողովրդի գոյութեան իրաւուն-
քը չեղավ:

Պատերն ամբողջապէս ծածկված են քարտէզ-
ներով, գծագրի տեղագրութիւններով: Տրան-
սվալի պէշգափներով, բօշների յաճախ աշ-
խատանքի, դառն քրտիքի գնով խոպան ա-
նապատներից կանաչ դաշտերի վերածված մի
ամբողջ երկրի տեսարաններով: Մի անկիւ-
նում փոքրիկ փայտեայ պահարանի մէջ շար-
ված են ազգային լեզուով տպագրված գրքեր
եւ քիչ հեռու մի սիրուն աշակերտական նստա-
րան: Պալիլիօնի թէ ստորին եւ թէ վերին
յարկում կենդանիների, բոյսերի եւ մասնաւոր
հանքերի հարուստ ժողովածու կայ: պատերի
տակ չարված են երկրի ամեն տեսակ բերքեր,

Գիւղատնտեսական մեքենաներ 250 նկարով. վաճառականների մօտ 50 կօպէկ: 18—30